ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/45

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Վահան Թորոսյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1806-2022 գրությամբ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 25.01.2022թ.-ի թիվ 38 գրության հիման վրա, 02.02.2022թ.-ին «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 02.02.2022թ.-ին:

03.02.2022թ.-ին www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/45 համարի ծածկագիրը:

16.02.2022թ.-ին և 04.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.03.2022թ.-ին:

2. «<u>Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 25.01.2022թ.-ի թիվ 38 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով 2022թ-ի սննդամթերքի ձեռքբերման համար 30/12/2021թ.-ին տեղի ունեցած գնանշման հարցման ընթացակրգով մրցույթի արդյունքում Ա/Ձ Վահան Թորոսյանը (ք.Գյումրի Բորյան 4/24 vahan300881@mail.ru, հեռ. 094526272) ներկայացրել է հայտ և ճանաչվել հաղթող 3,4,5,10,21,22,24,26,31,32,33,35,36,38,42,46,47,48,49,53,55,58 չափաբաժինների մասով;

07/01/2022թ. տեղի ունեցած բանակցություններին մասնակցել է նաև Ա/Ձ Վահան Թորոսյանի ներկայացուցիչ Կարեն Սուրենի Պետրոսյանը, և այդ օրվանից տեղյակ էր 3, 4,5,10,21,22,24,26,31,32,33,35,36,38,42,46,47,48,49,53,55,58 չափաբաժիններով հաղթող ճանաչվելու մասին: Քանի որ գնային առաջարկը շուկայական գներից շատ ցածր էր, կասկած առաջացավ, և բազմիցս զանգել ենք նախազգուշացնելով, որ պետք է կնքվի պայմանագիր հնարավորինս սեղմ ժամկետում, քանի որ պահեստում սննդամթերքը

սպառվում էր: 12/01/2022թ. Ա/Ձ Վահան Թորոսյանին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, սակայն Վահան Թորոսյանը հայտնել է, որ խնդիրների պատճառով մերժում է պայմանագիրը և չի կարող կատարել պայմանագրի պայմանները: Թե բանավոր զանգերով, թե էլեկտրոնային փոստի միջոցով խնդրել և պահանջել ենք գրավոր հրաժարվել պայմանագրից; Գրավոր պատասխան չստանալով՝ այս մասին տեղյակ ենք պահել ֆինանսների նախարարությանը: Ինչպես նաև ֆինանսների նախարարություն ուղարկած փաթեթը ուղարկել ենք նաև Վահան Թորոսյանին:

Գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքում որոշվեց Ա/Ձ Վահան Թորոսյանի շահած չափաբաժինները շնորհել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին և կազմվեց արձանագրություն 3-ը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վահան Թորոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1806-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ բանավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/45 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 23.12.2021թ.-ին հայտարարվել է «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ն:

iii. «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.01.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մի շարք չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին և վերջինիս առաջարկել կնքել պայմանագիր:

v. 13.01.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն 12.01.2022թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակցի vahan300881@mail.ru էլ. փոստի հասցեին է ներկայացրել «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

vii. Հանձնաժողովի 18.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հաշվի առնելով, որ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, որոշել է «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1806-2022 գրությամբ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև

որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 23.12.2021թ.-ին հայտարարված «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 9.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 23.12.2021թ.-ին հայտարարված «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.01.2022թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակցի vahan300881@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկվել է պայմանագրի նախագիծը և վերջինիս առաջարկվել է կնքել և ներկայացնել այն: Հանձնաժողովի 18.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, հաշվի առնելով, որ գործում առկա չէ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին ներկայացված գրություն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը 18.01.2022թ.-ին հրավիրելով նիստ և կայացնելով մասնակցի հայտը մերժելու մասին որոշում, գործել է ոչ իրավաչափ, քանի որ մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը ներկայացնելու համար՝ Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը լրանալու էր 26.01.2022թ.-ը ներառյալ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, եթե առկա է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Բացի վերոգրյալներից՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 10-րդ հոդվածի և 36-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտում, քանի որ Պատվիրատուն Մասնակցին ներկայացրել է «ՇՄԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ 2022/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը 12.01.2022թ.-ին, այն դեպքում երբ www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 13.01.2022թ.-ին և սահմանվել անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

Այլ կերպ ասած՝ պատվիրատուն պետք է Մասնակցին ծանուցեր, ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքների հաշվառմամբ՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, կամ որ վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1806-2022 գրությամբ «Վահան Թորոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2022/45 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**